

Տեղի ունեցաւ Գանատայի Հայ Դատի յաճախումքի Լիագումար ժողովը



Շաբաթ, 21 մարտ 2026-ին, Քինկաթընի մէջ գումարուեցաւ ՀՅԴ Գանատայի Հայ Դատի շրջանային յանձնախումբի 2025-27 երկամեակի լիագումար ժողովը, մասնակցութեամբ յանձնախումբի անդամներուն եւ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչին:

Միօրեայ ժողովի ընթացքին, յանձնախումբի անդամները քննեցին անցնող շրջանի գործունէութիւնը՝ գնահատելով ձեռքբերումները եւ արձանագրելով առկա մարտահրաւէրները: Այս ծիրին մէջ յատուկ շեշտ դրուեցաւ Հայ Դատի աշխատանքներու համակարգուած եւ նպատակային ընդլայնման ուղղութեամբ՝ ռազմավարական, մարտավարական եւ գործնական մակարդակներուն վրայ: Քննարկուեցան նաեւ հաղորդակցութեան, հանրային կապերու եւ քաղաքական լոպիինկի միջոցները աւելի զարգացնելու հնարաւորութիւնները:

Յանձնախումբը սահմանեց յառաջիկայ տարուան հիմնական առաջնահերթութիւնները՝ ընդգծելով երիտասարդութեան ներգրաւման կարեւորութիւնը: Նշուեցաւ, թէ անհրաժեշտ է նոր սերունդը աւելի խորապէս մասնակից դարձնել Հայ Դատի աշխատանքներուն՝ կրթական նախաձեռնութիւններու, կամաւորական ծրագրերու եւ քաղաքական իրազեկման միջոցառումներու միջոցով:

Ժողովի ընթացքին վերահաստատուեցաւ յանձնախումբին անսակարկ յանձնառութիւնը՝ պաշտպանելու Արցախի ժողովուրդի հիմնարար իրաւունքները եւ արդար դատը: Այս շրջագիծին մէջ կարեւորուեցաւ միջազգային մակարդակի վրայ շարունակական ճնշում բանեցնելու անհրաժեշտութիւնը՝ ապահովելու համար Ատրպէյճանի մէջ պահուող հայ գերիներու եւ պատանդներու ազատ արձակումը եւ արցախահայրենիքի վերականգնումը: Միաժամանակ, ընդգծուեցաւ հայկական մշակութային եւ կրօնական ժառանգութեան պահպանման հրատապութիւնը՝ ի դիմաց շարունակուող ոտնձգութիւններուն եւ ոչնչացման փորձերուն:

Յանձնախումբը նաեւ վերահաստատեց իր հետեւողական դիրքորոշումը՝ ի պաշտպանութիւն Հայաստանի մէջ ժողովրդավարութեան ամրապնդման եւ կրօնական ազատութիւններու պահպանման: Նշուեցաւ, թէ այս սկզբունքները առանցքային են ոչ միայն Հայաստանի պետականութեան կայացման, այլ նաեւ համահայկական շահերու պաշտպանութեան տեսանկիւնէն:

Ժողովի աւարտին յանձնախումբը վերահաստատեց վերոնշեալ հարցերու ուղղութեամբ իր վճռակամ կեցուածքը եւ զանոնք յաջողութեան առաջնորդելու անկոտրուած պատրաստակամութիւնը:

Յայտարարութիւն ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան

ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութիւնը իր վերջին լիագումարին ընթացքին հանգամանորէն քննարկեց միջին արեւելեան Հայ գաղութներուն իրավիճակը, դիմադրուած մարտահրաւէրները եւ վտանգները՝ ռազմաքաղաքական վերջին զարգացումներուն լոպիին տակ:

Կեդրոնական վարչութիւնը վերահաստատեց, որ միջին արեւելեան մեր գաղութները, որոնք կենսական եւ անբաժանելի մասն են հայկական Սփիւռքին, շնորհիւ ազգային-եկեղեցական ղեկավարութիւններուն թափած ճիգերուն, կը շարունակեն իրենց գոյութիւնն ու առաքելութիւնը՝ հակառակ բազում եւ բազմապիսի դժուարութիւններու:

Այս առիթով՝ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութիւնը կը հաստատէ, որ մօտէն կը հետեւի արձանագրուող զարգացումներուն եւ ամբողջական պատրաստակամութեամբ կը շարունակէ իր բոլոր կարելիութիւնները ի սպաս դնել, որպէսզի միջին արեւելեան մեր գաղութները կարենան գոյատեւել նման վտանգներով լի կացութիւններու մէջ:

Կեդրոնական վարչութիւնը, թարգմանը հանդիսանալով մեր կազմակերպութեան շարքերուն, կը յուսայ, որ շուտով վերջ կը գտնեն պատերազմական գործողութիւնները, որպէսզի միջին արեւելեան մեր գաղութները իրենց հաւաքական կեանքը շարունակեն՝ բնականոն պայմաններու մէջ:



ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Իշխան Սաղաթէլեան. «Իրական խաղաղութիւնը կը սկսի այնտեղ, ուր կ'աւարտի վախը»

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ եւ ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթէլեան հանդէս եկած է յայտարարութեամբ, ուր խստորէն քննադատած է Հայաստանի գործող իշխանութիւններու վարած քաղաքականութիւնը:

Սաղաթէլեան դիտել տուած է, թէ Ատրպէյճանի նախագահ Ալիեւը կը յարձակի միայն այնտեղ, ուր յաղթանակը երաշխաւորուած է, իսկ 2023 թուականի Արցախի վրայ յարձակումը հնարաւոր դարձաւ միայն այն պատճառով, որ պաշտօնական Երեւանը Արցախը ճանչցաւ Ատրպէյճանի կազմին մէջ՝ փաստօրէն տալով չմիջամտելու երաշխիքներ:

Սաղաթէլեան նշած է, որ այսօր նոյն տրամաբանութիւնը կը փորձեն պարտադրել Հայաստանին, սակայն իրականութեան մէջ կը հարուածեն նոյնինքն անոնց, որոնք ծուռնիկ եկած են ու կը հրաժարին պաշտպանուելէ:

ՀՅԴ ներկայացուցիչը շեշտած է, որ պետութիւնը պաշտպանելու պատրաստակամութիւն ունեցող ղեկավարի պարագային պատերազմի հաւանականութիւնը կը նուազի, քանի որ թշնամին ստիպուած կ'ըլլայ հաշուի առնել պատերազմի «գիրը»: Ան ընդգծած է, որ այսօր Հայաստանի վրայ յարձակիլը Ալիեւի համար «անվճար» է, քանի որ դիմացը կանգնած է չպաշտպանուելու երաշխիքներ տուող իշխանութիւն:

Մէջբերելով Հրանտ Մաթեոսեանի խօսքերը՝ Սաղաթէլեան կոչ ուղղած է կանգնիլ տղամարդու պէս եւ թոյլ չտալ թշնամին գոռով կոտրել ու ծալել հայ ժողովուրդը: Ան իր յայտարարութիւնը եզրափակած է այն համոզումով, որ իրական խաղաղութիւնը հնարաւոր է միայն վախի բացակայութեան պայմաններուն մէջ:

BEFORE YOU REPLACE THEM REJUVENATE THEM.

Don't buy new when your hearing aids can sound new again.

- REVIVE Deep Clean & Restore
- RENEW Calibrate & Optimize
- REJUVENATE Hear Like New

hearing aid source
hearing instrument specialists

hearingaidsource.ca
hello@hearingaidsource.ca

NEVER WORN HEARING AIDS BEFORE? NOT SURE WHERE TO START?
If your hearing isn't as clear as it used to be, or you're exploring hearing aids for the first time, we offer free hearing tests to assess your hearing. Our team provides clear, professional guidance so you feel confident and supported from your first appointment.



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

★ IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղին աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Մոնթրեալի մէջ տեղի ունեցաւ Նիկոլ Աղբալեանի Գուրուած յուշ երեկոյ

Կազմակերպութեամբ Համազգայինի Քեպէզի «Սանահին» մասնաճիւղի Գրական յանձնախումբին, Երեքշաբթի, 24 մարտ 2026-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, Մոնթրեալի Հայ կեդրոնի «Ահարոնեան» սրահէն ներս, տեղի ունեցաւ Նիկոլ Աղբալեանի նուիրուած յիշատակի երեկոյ, ներկայութեամբ Համազգայինի Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետ Թամար Շահինեանի, եւ անդամներու՝ Մարալ Պէրպէրեանի, Անահիտ Պալեանի եւ Մովսիս Կուտեանի, մասնաճիւղի վարչութեան ատենապետ Ռուբէն Սարգիսեանի եւ անդամներու, ինչպէս նաեւ խումբ մը համազգայնականներու եւ գրասէրներու:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Համազգայինի Քեպէզի «Սանահին» մասնաճիւղի Գրական յանձնախումբին մօտ վարչութեան ներկայացուցիչ Նանոր Աշնա Մնասպեան, որմէ ետք բեմ հրաւիրուեցան Վարանդ Եսփոճեանն ու Արազ Եաղճեանը: Անոնք ամբողջ ձեռնարկին ընթացքին մէջ ընդմէջ ներկայացուցին գրականագէտ, կրթական մշակ, քննադատ, քաղաքական ու մշակութային գործիչ, հրատարակաւոր եւ դաշնակցական մտաւորական Աղբալեանի կենսագրութիւնն ու լայնածաւալ գործունէութիւնը՝ Թիֆլիսէն Հայաստան, Մոսկուա, Գահիրէ եւ Լիբանան:

Խօսելով իր երիտասարդութեան տարիներուն մասին Եսփոճեան ըսաւ. «19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկիզբին, Անդրկովկասի հայութեան մշակութային կեդրոն Թիֆլիսը հնարաւորութիւն կ'ընձեռէր երիտասարդ Աղբալեանին՝ դրսեւորելու իր ամբարած գիտելիքներն ու ունակութիւնները: Հոն կը հանդիպէր Աւետիք Արասիանեանի, որ խմբագիրն էր «Մուրճ» յառաջադէմ ամսագրին, որուն ուղղութիւնը լաւագոյնս կը համապատասխանէր Աղբալեանի մտածողութեան: Ամսագրի յետագայ համարներուն մէջ, երեք տարուան ընթացքին լոյս կը տեսնէին Աղբալեանէն մի քանի տասնեակ գրախօսականներ, յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, որոնք որոշակի համբաւ կ'ապահովէին երիտասարդ քննադատին: Այդ ժամանակ, Աղբալեան հնարաւորութիւն կ'ունենար ծանօթանալու Յովհաննէս Թումանեանին, Աւետիք Իսահակեանին, Ղազարոս Աղայեանին, Լեւոն Շանթին, Դերենիկ Դեմիրճեանին, եւ 1899 ղեկավարեցին կը դառնար Թումանեանի «Վերնատան» անդամներէն մէկը»:

Անդրադառնալով պետական գործիչ Աղբալեանին, Եաղճեան ըսաւ. «Մեր պատմութիւնը կերտողներէն մէկը գրականագէտ ու քննադատ, բանասէր, հեռուոր, հանրային ու քաղաքական գործիչ Նիկոլ Աղբալեանն էր, որ շուտով կը դառնար նաեւ պետական գործիչ՝ Հայաստանի առաջին խորհրդարանի պատգամաւոր, ապա հանրային կրթութեան եւ արուեստի նախարար: Ե՛ւ պատգամատրի, ե՛ւ նախարարի պարտականութիւնները ան կը կատարէր իրեն յատուկ բարեխղճութեամբ, գիտելիքներն ու ունակութիւնները ի սպաս դնելով նորաստեղծ հանրապետութեան բարելաւման եւ անոր արտաքին անկախութեան գործին: Աղբալեանի նախաձեռնութեամբ, խորհրդարանը կ'ընդունէր ուսման մասին ընդհանուր եւ պարտագիր օրէնքը: Շարք մը այլ նախաձեռնութիւններով, ան կը կարգաւորէր կրթական եւ մշակութային գործունէութիւնը, ինչպէս եւ գրադարանային եւ հրատարակչական գործերու կազմակերպումը: Այս ամէնուն զուգընթաց, ան կը ստեղծէր գրական նոր ընկերութիւն, զոր կը կոչէր Հայաստանի գրական ընկերութիւն, եւ որուն նիստերէն մէկուն ընթացքին, 1919 հոկտեմբեր 16-ին կը կարդար Եղիշ Չարենցի մասին իր նշանաւոր գեղեցումը», իսկ Եսփոճեան աւելցուց ըսելով. «Այս շրջանի Աղբալեանի գործունէութեան պատկեր կը հանդիսանար Հայաստանի պետական համալսարանի բացումը 1920 յունուար 31-ին Ալեքսանդրապոլի մէջ, որուն ընթացքին Աղբալեան ճառով մը կը բնորոշէր համալսարանի կատարելիք դերը Հայ ժողովուրդի կեանքին մէջ»:

Որպէս մշակութային գործիչ եւ հիմնադիր Համազգայինի Հայ կրթական եւ Մշակութային միութեան, Եսփոճեան Աղբալեանը բնորոշեց ըսելով. «Աղբալեանի համար միշտ առաջնահերթ եղած էր հայ ոգին, հայ լեզուն վառ պահելը, հայ գրականութիւնն ու մշակոյթը պահպանելու եւ սերունդներու փոխանցելու մտահոգութիւնը: Այդ մղու-



Հայ ժողովուրդի անխնայ մշակը
Նիկոլ Աղբալեան

մով ալ, Աղբալեան, Լեւոն Շանթ եւ իրենց տասնեակ մը համախոհները, Գահիրէի մէջ կը հիմնէին կազմակերպութիւն մը, որ իր վրայ պիտի վերցնէր այդ ծանր առաքելութիւնը: 1928 մայիս 28-ին՝ Հայաստանի անկախութեան օրը, անոնք կը ստեղծեն այդ կազմակերպութիւնը, զայն անուանելով Հայ կրթական եւ հրատարակչական համազգային ընկերութիւն (այժմ՝ համազգային հայ կրթական եւ մշակութային միութիւն)»:

Իսկ անդրադառնալով անոր հանդէպ կատարուած հալածանքներուն, բանտարկութեան եւ մանաւանդ հայրենիքէն ու ընտանիքէն հեռու ապրելուն դաժան իրականութեան, Եաղճեան ըսաւ. «Երկար տարիներ ապրած է հայրենիքէն եւ ընտանիքէն հեռու. երկու մեծ ցաւ, զոր տասնամեակներ շարունակ կրած է իր սրտին մէջ: 1921-ի գարնան կտրելով պղտոր Արաքսը եւ վերջին անգամ նայելով իր սիրելի հայրենիքին՝ թափառած է երկրէ-երկիր, մինչեւ որ Լիբանանի հիւրընկալ հողը դարձած է իր երկրորդ հայրենիքը»:

Վերջապէս, Աղբալեանի իսկական մեծութեան անդրադարձը, մահէն ետք ի յայտ եկած ըլլալուն մասին Եաղճեան եւ Եսփոճեան յիշեցին իր մասին գրուած տասնեակ յուշեր եւ յօդուածներ, սփռուած հայ գրագէտներու եւ գործիչներու կողմէ կատարուած ուսումնասիրութիւններ եւ իրեն վաստակին նուիրուած հանդիսութիւններ, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ գործող Աղբալեանի անուամբ Ուսանողական միութիւնը, իր անունով վերանուանուած դպրոցը եւ շարք մը այլ նախաձեռնութիւններ, որոնք հայրենիքի մէջ Աղբալեանի հանդէպ ուշացած երախտագիտութիւնը կ'արտացոլացնեն:

Ներկայացման ընթացքին Սայաթ Նովայի «Յիսա քու դիմէ՞մն չիմ գիտի» եւ «Դու էն գլխէն իմաստուն իս» երգերու կատարումով հանդէս եկաւ մոնթրեալահայ անուանի երգիչ Էլի Պէրպէրեան, ինչպէս նաեւ ընթերցումներ կատարուեցան հերթաբար՝ Եսենիա Քելլեանի կողմէ՝ Վերնատան ընկերներուն ուղղուած Աղբալեանի նամակներէն չափածոյ քանի մը կտոր, Սերժ Սոմունեանի կողմէ՝ Եղիշ Չարենցի «Սիրելի Ա.-ին» բանաստեղծութիւնը՝ Աղբալեանին նուիրուած, եւ Թայլին Գասպարի կողմէ՝ Աղբալեանի կնոջ՝ Հարաբիին ուղղուած իր նամակներէն մէկը: Ընթացքին նաեւ ցուցադրուեցաւ Լիբանանի Համազգայինի Հայկ եւ Մեդաքթոն Արսլանեան ճեմարանի նախկին տնօրէնին՝ Տիգրան Չինպաշեանի կողմէ ձայնագրուած տեսահոլովակ մը՝ Աղբալեանի պատգամներուն մասին, որ արձանագրուած էր ճեմարանաւարտ Սեւակ Սաղապարեանի կողմէ: Ընթացքին նաեւ ցուցադրուեցաւ իր յուշերուն մասին պատմումով մը հանդէս եկաւ ճեմարանաւարտ Վարուժ Շամբեան, որ հետաքրքրական միջադէպերու եւ ճեմարանի առօրեային մասին հետաքրքրական պատմումներով ներկայացուց ուսուցիչ Աղբալեանի նկարագիրը, սովորութիւններն ու ազդեցութիւնը աշակերտներուն վրայ:

Աւարտին Մնասպեան շնորհակալական խօսքով հանդէս եկաւ, որմէ ետք ներկաները միասնաբար կատարեցին «Ես իմ անոյշ Հայաստանի» երգին խմբային երգեցողութիւնը:

Սոնա Թիթիզեան Կէտիկեան

Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանի աշակերտները Երեւանի մէջ հանդիպեցան Իշխան Սաղաթէլեանի եւ Քրիստինէ Վարդանեանի հետ

Թորոնթոյի Հայ Օգնութեան Միութեան Ամէնօրեայ վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտները, Հայաստան կատարած իրենց այցելութեան շրջանի ընթացքին, Երեւանի մէջ հանդիպում ունեցան ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ եւ Ազգային ժողովի պատգամաւոր Իշխան Սաղաթէլեանի, ինչպէս նաեւ Գերագոյն մարմինի անդամ եւ Ազգային ժողովի պատգամաւոր Քրիստինէ Վարդանեանի հետ: Հանդիպումը տեղի ունեցաւ ՀՅԴ Գերագոյն մարմինի Սիմոն Վրացեան կեդրոնի շէնքէն ներս:

Հանդիպման ընթացքին, աշակերտները ունկնդրեցին խորհրդարանի անդամներու ներկայացումները, որոնք կ'անդրադառնային Հայաստանի քաղաքական իրավիճակին, ազգային մարտահրաւէրներուն, ինչպէս նաեւ Արցախի եւ Հայ Դատի առնչուող հարցերուն: Աշակերտները նաեւ առիթը ունեցան ուղղակի հարցումներ ուղղելու եւ քննարկման մասնակցելու՝ դրսեւորելով բարձր հետաքրքրութիւն եւ ներգրաւուածութիւն:

Այցելութեան շրջանակին մէջ, աշակերտները շրջայց կատարեցին նաեւ ՀՅԴ Բիւրոյի գրասենեակի գետնայարկը գտնուող Դաշնակցութեան թանգարանին մէջ, ծանօթանալով կազմակերպութեան պատմութեան, գործունէութեան եւ ազգային պայքարի առանցքային հանգրուաններուն:

Այս այցելութիւնը աշակերտներուն համար հանդիսացաւ ուսուցողական եւ ոգեւորիչ փորձառութիւն մը՝ ամրապնդելով անոնց կապը հայրենիքին եւ ազգային կառույցներուն հետ:

ՀՕՄ-ի պատուիրակուիւնը մասնակցեցաւ ՄԱԿ-ի Կանանց Իրավիճակի Յանձնաժողովի 70-րդ նիստին

9 մարտ 2026-ին, Նիւ Եորքի մէջ գտնուող ՄԱԿ-ի կեդրոնին մէջ, Հայ Օգնութեան Միութեան (ՀՕՄ) պատուիրակութեան մասնակցութեամբ կայացաւ Կանանց Իրավիճակի Յանձնաժողովի (CSW) 70-րդ խորհրդաժողովի բացման պաշտօնական նիստը: Այս տարուան խորհրդաժողովը կը կեդրոնանար «Կիններու եւ աղջիկներու արդարադատութեան հասանելիութեան ապահովման եւ ամրապնդման» վրայ՝ ընդգծելով ներառական եւ իրաւական արդար համակարգերու զարգացումը, խտրական օրէնքներու եւ գործելակերպերու վերացումը, ինչպէս նաեւ կառուցային խօսքը նուիրելու յաղթահարումը:

Հայ Օգնութեան Միութիւնը, որ 1976-էն ի վեր որպէս ոչ-կառավարական կազմակերպութիւն կը մասնակցի ՄԱԿ-ի աշխատանքներուն, 1988-էն ի վեր ունի խորհրդատու անդամի կարգավիճակ ՄԱԿ-ի Տնտեսական եւ Ընկերային Խորհուրդին մօտ: Այս հանգամանքը կը շարունակէ ապահովել ՀՕՄ-ի գործուն ներգրաւուածութիւնը միջազգային հարթակներու վրայ, մասնաւորաբար կիններու իրաւունքներուն եւ սոցիալական արդարութեան վերաբերող հարցերուն մէջ:

Խորհրդաժողովին ընթացքին ՀՕՄ-ի պատուիրակութեան անդամները մասնակցեցան տարբեր բարձրաստիճան հանդիպումներու եւ քննարկումներու: Անոնք ներկայ գտնուեցան թաունհոլ ձեւաչափով կազմակերպուած ընդհանուր հանդիպման մը ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնիո Կուլթերէշի հետ, ուր քննարկուեցան համաշխարհային մարտահրաւէրներ եւ կանանց իրաւունքներու ամրապնդման ուղիներ:

Պատուիրակութիւնը նաեւ մասնակցեցաւ Յորդանանի կողմէ կազմակերպուած միջոցառման եւ հանդիպում ունեցաւ ՄԱԿ-ի Կիններու հարցերով գործադիր տնօրէն Սիմա Սամի Պահուսի հետ: Այս առիթով ՀՕՄ-ի ներկայացուցիչները ներկայացուցին Միութեան գործունէութիւնը եւ ընդգծեցին հայկական համայնքներու մէջ իրականացուող ծրագրերը: Նմանապէս տեղի ունեցան



հանդիպումներ Իտալիոյ արտաքին գործոց նախարարութեան համապատասխան բաժնի ներկայացուցիչ Լուքա Յրաթիւնիի եւ Եւրոնեքս-ի սեփուր միջեւ հաւասարութեան բաժանմունքի տնօրէն Մարիա Պոկոնա Լասակապալմըրի հետ:

ՀՕՄ-ի պատուիրակութիւնը ներկայ գտնուեցաւ նաեւ Եւրոպական Միութեան հետ ստեղծուած «Կիններու եւ աղջիկներու դէմ վալրագութեան կանխարգելման գործընկերներու խումբ»ին նախարարական մակարդակի հանդիպման:

Խորհրդաժողովի ծիրին մէջ ՀՕՄ-ի ՄԱԿ-ի յանձնախումբը կազմակերպեց առանձին նիստ մը՝ «Տեղահանութեան դէպքի արդարութիւն. պաշտպանութեան ամրացում, իրաւունքներ եւ ապաքինում» թաղանթի գօտիներու մէջ ապրող կանանց համար» խորհրդով: Մարտ 17-ին տեղի ունեցած այս նիստին ընթացքին մասնագէտներ ներկայացուցին գեկոյցներ եւ վերլուծութիւններ՝ շեշտելով հակամարտութիւններէ տուժած կիններու իրաւունքներու պաշտպանութեան հրատապութիւնը:

Նշենք, որ ՀՕՄ-ի պատուիրակութեան մաս կը կազմեն զանազան շրջաններէ ժամանած ընկերակիցներ, ներառեալ Գանատային, որոնք իրենց մասնակցութեամբ կը շարունակեն նպաստել հայկական կազմակերպութեան միջազգային դերակատարութեան ամրապնդման:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔԾԵԱՆ ԿԱՄ ՎԱՐԺԵՑՈՒՄ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ (Սփիւռքեան մտածողութիւն մը)

Ինքնուրուիտ...

2. բ.- Յ. Քիւրքճեանի սփիւռքեան ինքնուրուիտ տեսարանումը 1968-ին հրատարակ կու գար «Ահեկան» պարբերականին մէջ: Անիկա «Երկրորդ Հաւասարում Բազմաթիւ Անյայտներով» վերնագրութիւնը ունէր: Զայն ներշնչողը, գուցէ փութացնողը Հայաստանի գրողներէն՝ Վարդգէս Պետրոսեանի մէկ գրութիւնն էր. «Հաւասարում Բազմաթիւ Անյայտներով», լոյս տեսած 1968-ի «Գարուն» թիւ 3-ին մէջ (Պետրոսեան ետքը նոյն տիտղոսով հատոր մը հրատարակութեան պիտի յանձնէր: Հատորը լոյս տեսած է 1977-ին, Երեւան):

Պետրոսեանի գրութիւնը՝ խորհրդածութիւն մըն է, որ գրական մտահոգութեամբ կատարուած է, եւ կը վերաբերի «ազգային կերպար» հասկացողութեան: Ան խնդրականացուցած է ատոր աւանդական ընկալումը, եւ նորին ընդառնում առաջարկած: Իսկ Քիւրքճեանի գրափորձը՝ նոյնը կատարած է, սակայն սեւեռուելով ինքնուրուիտ հարցին:

Արդ, քանի իմ առաջագրութիւնս ինքնուրուիտ մասին է, եւ քանի Քիւրքճեանի ծիրին մէջն ենք, Պետրոսեանի միտքերէն պիտի քաղեմ «հայ մարդու բնութագիր»-ին, այլ խօսքով՝ ինքնութեան առնչուածները:

Նախ եւ առաջ ըսեմ, որ Պետրոսեան ի մտի ունեցած էր 50-ական եւ 60-ական թուականներու հայաստանցի հայ մարդը:

Ան իր խորհրդածութիւնը սկսած է երիտասարդներու հետ երեկոյթի մը նշմարով: Նոր վերադարձած Գանատայէն՝ գինք հրաւիրած էին

Աշտարակի «Միծեռնակ» անուն սրճարանը: Երիտասարդները հետաքրքրուած էին, թէ «ինչ կայ ովկիանոսից այն կողմ»: Ամէնքը հաւաքուած էին շամփայնի եւ սուրճի սեղաններու շուրջ: Պետրոսեան նկարագրած է, թէ երբ խօսակցութիւնը շատ կը լրջանար, կը միջամտէր գիւղի փոքրիկ ջազը: Կը նուագէին եւ կ'երգէին ժաք Բրեյլ, Ազնաւուր, Կոմիտաս: Նաեւ կը պարէին. թուրիսթ, շէյք ալ կը փորձէին: Այնտեղ ուշադրութիւն գրաւած էր ջրաղացպանին տղան, որ օրիորդի մը հետ թուրիսթ կը պարէր...:

Պետրոսեան այս նշմարը գրի առած է՝ ըսելու համար, թէ պահը իրեն յայտնած է «մի շարք մտքերի» լուծում: Պահը նոր վկայութիւն էր այն մասին, թէ երբ փոքր միջավայր մը նման պատկեր կը պարզէ, ապա «Հայաստանի երեսուն հազար քառակուսի կիրոմետրը... աւելի խայտաբղէտ, բարդ ու ծայրայեղութիւններով հարուստ է»: Հայաստանը եւ հայը կենցաղի, սովորութիւններու գարգացման մակարդակի, մարդկային խառնուածքներու, հինի եւ նորի, հակասութիւններու գոքթէյլն է: Գրած է. «...մենք ապրում ենք (...) ազգային խառնուածքի վերանորոգման բարդ պրոցես: Այդ պրոցեսին նպաստում են բազմաթիւ երեւոյթներ՝ սոցիալական, տնտեսական վիթխարի փոփոխութիւնները, մեր անհանգիստ ու հիւանդագին դարաշրջանը, այն՝ որ համատարած գիւղերի երկրից՝ Հայաստանը դառնում է քաղաքների, տեխնիկական ինտելիգենցիայի, գիտութեան, ամենաժամանակակից արդիւնաբերութեան երկիր: Ազգային խառնուածքի վերանորոգման այդ պրոցեսին չէր կարող չհաղել նա-

եւ այն, որ այդ տարիներին հայրենիք են վերադարձել ու շարունակում են վերադառնալ տարբեր պետութիւնների եւ ժողովուրդների կնիքը կրող մեր հազարաւոր հայրենակիցներ»: Համաձայն իրեն, «նոյնիսկ պետականութեան պայմաններում», քաղաքակրթութեան բնական հանգրուաններն անցած ժողովուրդներու ազգային խառնուածքի, աւանդութիւններու, կենցաղի պատկերացումներուն մէջ հակասութիւններ եւ ծայրայեղութիւններ կան, իսկ փոքրաթիւ ժողովուրդներու պարագային, ինչպէս հայութեան, որ ապրեր է «անըմբռնելի ճակատագիր», եւ որուն գլխուն «հարիւրամեակներ շարունակ կախուած է եղել ֆիզիքական բնաջնջման վտանգը», այն հակասութիւններն ու ծայրայեղութիւնները «կողք կողքի» ըլլալով՝ աւելի կ'երեւան: Այս իրողութիւնը կը ստիպէ, որ սրբագրուի «հայ մարդու ազգային նկարագրի աւանդական պատկերացումը»: Արդ, ըստ իրեն, հայութեան որպէս մէկ բնաւորութիւն ըմբռնումը՝ անցեալին կը պատկանէր: Գրած է. «ազգային կողորիտ, ազգային բնաւորութիւն հասկացութիւնները պատմական երեւոյթ են, եւ ոչ՝ մէկընդմիջ սահմանուած որակ»: Հայութիւնը, ինչպէս ուրիշներ, բազմազան բնաւորութիւններով ազգ մըն է: Հայաստանը «անհանգիստ դար» ու աշխարհի բնաւորութիւն էր: Եւ անոր մէջ տեղի կ'ունենային ժամանակակից կեանքի «բոլոր պրոցեսները»: Այնտեղ ո՛չ միայն կը շարունակուէին աւանդները, այլեւ կը ծնէին նոր աւանդներ, նոր պատկերացումներ, «նոր կերպարներ» (նաեւ հասկնալ՝ նոր ինքնութիւններ): Փոփոխութիւններուն այս ընթաց-



քը իր հայեացքը եւ բարոյականը կը պարտադրէ: Այս համոզմամբ՝ ան գրած է. «Մենք իրաւունք չունենք այդ պրոցեսի, հին, երբեմն մեռնող մասը համարելու մեր ազգային կեանքին յատուկ, իսկ նորը, գուցէ առայժմ դեռ անհասկանալին՝ մերժելը»:

«Ազգային կերպարի հասկացողութիւն»ը, հետեւաբար՝ նաեւ ազգային ինքնութիւն հասկացողութիւնը շատ անյայտներ ունի: «Գնալով բարդանում է մեր օրերի հայ մարդու բնութագիրը...քանի որ... նա ապրում է իբրեւ 20-րդ դարի երկրորդ կէսի մարդ՝ իր մարդկային, ազգային եւ համամարդկային հոգսերով», գրած է Պետրոսեան:

ԳԱՌՆԻԿ Ա. Ք. Գ. (Շարունակելի 5)

Սփիւռքի մասին մտորումներ

Սփիւռքը իբրեւ քաղաքական հաւաքականութիւն ճանչնալու եւ հայրենիքին հետ կապուած անոր գարգացման հարցը քննելու նախադրեալ յօդուած մըն է այս գրութիւնը: Անշուշտ, մասնագիտական երկար նիւթ է Սփիւռքը իբրեւ ոչ-պետական եւ անդրազգային հաւաքականութիւն քննարկելու եւ անոր քաղաքական, տնտեսական, մշակութային եւ գանազան մարդերու գոյութիւնը մեկնաբանելու եւ արժեւորելու գործը: Այս գործին մէջ խաչիկ Թէօօլեանի եղած է ռահիբրան եւ Սփիւռքի մասին քաղաքական մտածողութեան դպրոց մը ստեղծողը, որուն կը հետեւինք բոլորս: Առիթը եւ պատիւը ունեցայ գրուեցնելու խաչիկին հետ 14-էն 15 մարտին տեղի ունեցած Սփիւռքին նուիրուած խորհրդածողովին:

Կը հաւատամ, որ բացատրողական հիմնական հինգ հոլովոյթներու մէջ կարելի է պարփակել քաղաքական երեւոյթի մը կամ հաւաքականութեան մը ամբողջական հասկացողութիւնը: Իւրաքանչիւրը ուսումնասիրութեան առանձին տարածք մը կը բանայ եւ մասնագիտական առանձին նիւթեր կը ստեղծէ քաղաքական տուեալ գոյութեան մը, ներառեալ Հայկական Սփիւռքին, յարաբերութիւններու մեկնաբանութեան ուղղութեամբ:

Իրենց ամփոփ եւ պարզ պարունակին մէջ, բացատրողական հինգ հոլովոյթները կարելի է ներկայացնել իբրեւ՝ 1. կառոյց, 2. անհատականութիւն, 3. քաղաքական մշակոյթ, 4. կենսաբանական կազմուածք, 5. Վարուելակերպ կամ կեանքի ընթացք մը, որ կը յառաջանայ տուեալ հաւաքականութեան մը քաղաքական կառոյցին, ներառեալ ենթակառոյցին մէջ:

Այս յղացքներէն իւրաքանչիւրը ինքն իր մէջ յառաջացուցած իւրաքանչիւրը տուեալներով, ուսումնասիրական եւ լուսաբանական առանձին միջոց եւ ուղղութիւն կը զարգացնէ՝ Սփիւռքը միաձոյլ եւ ճկուն համակարգային տրամաբանութեամբ մը մեկնաբանելու իմաստով: Հետեւաբար, Հայկական Սփիւռքի բազմակողմանի հասկացողութիւնը կը կարօտի նաեւ վերոյիշեալ հինգ բացատրողական հոլովոյթներուն ուղղութեամբ ուսումնասիրական գարգացումներու:

Առ այդ, Հայկական Սփիւռքը՝ իբրեւ քաղաքական իւրաքանչիւր մէկ երեւոյթ, իր ամբողջութեան մէջ ներկայացնելու եւ անոր քաղաքական իրավիճակին ծանօթանալու համար, պէտք է վերոյիշեալ հինգ բացատրողականներու լոյսին տակ ուսումնասիրութիւններ

կատարել: Պարզ խօսքով՝ Սփիւռքը ճանչնալու համար պէտք է ծանօթանալ անոր քաղաքական կառոյցին, ուսումնասիրել սփիւռքահայ անհատը իբրեւ քաղաքական անհատականութիւն եւ վերլուծել անոր քաղաքականացման ընթացքը՝ տարբեր տարիքներու մէջ, ուսումնասիրել Սփիւռքի մէջ զարգացող քաղաքական մշակոյթը, քննարկել կենսաբանական տուեալները սփիւռքահայ անհատին (թէ կենսաբանական իմաստով ի՞նչ են տուեալները, որոնք սփիւռքահայ անհատը կը մղեն դերակատար ըլլալու քաղաքական կեանքին մէջ՝ իբրեւ ղեկավար, նախաձեռնող, կրաւորական կամ հետեւող եւ այլն) եւ, վերջապէս, ուսումնասիրել Սփիւռքի կառոյցին մէջ զարգացող քաղաքական վարուելակերպը, գործունէութիւնը եւ ընթացքը:

Այսօր կրնանք տարտամ եւ անորոշ տպաւորութիւններ տալ Հայկական Սփիւռքի քաղաքական մշակոյթին մասին: Տակաւին կան հիմնական եւ զարգանալի յատկանիշներ այդ մշակոյթին մէջ, օրինակ՝ վարանոտ ազատականութիւն, անհատականութիւն, պատկանելիութեան տարտամ գիտակցութիւն եւ ենթարկուած կամ պարտադիր համակերպում:

Փխրուն է Սփիւռքի քաղաքական մշակոյթը, նաեւ՝ կառոյցը: Գիտենք, որ կը պակսին առարկայական առումով պետականութեան տուեալները, հետեւաբար, կը մնայ բարոյական արժէքներով յառաջացող եւ անկապակից պատմութիւն մը գաղութներու դաշնակցութեան մէջ, առանց պայմանաւորուելու կեդրոնական հեղինակութեան մը գոյութեամբ:

Քննարկումի հիմնական նիւթ է անշուշտ Սփիւռքի պատմութիւնը: Նախ, ընդունինք, որ Հայկական Սփիւռքը շօշափելի իրականութիւն մըն է եւ ունի իր պատմութիւնը՝ նախքան անոր «Սփիւռք» ճանչցուիլը: Սփիւռքի պատմութիւնը բազմակողմ փորձառութիւն մը ունի՝ կորուստէն վերապրում, կրօնականէն աշխարհական, տեղայնականէն անդրազգային եւ, հետեւաբար, նաեւ կարողութիւնը ունի բարոյական դատումներ ընելու իր գործունէութեան մասին եւ բանական ուղղութիւն մը ճշդելու իր բազմատարած պատմութեան:

Չեմ կարծեր, որ Սփիւռքը պատմական ուղեցոյց մը ունի իր գլխուն վրայ, կամ ուղղութիւն մը իր ազգային զարգացման ընթացքը ճշդող: Բայց նաեւ, դժուար է Սփիւռքին հետ ըլլալ եւ անոր մարմինին դա՛նալ կամ հոգին տեսնել առանց ազգային բազմաբնույթութեան:

Հարցազրույց Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Ծրջանային Վարչութեան Սիրտէ Սիրտ Խմբակցութեան յանձնախումբի անդամներ Անի Օհանեանի եւ Հուրի Նաճարեանի հետ

Կրթութիւնը ազգի գոյատեւման եւ շարունակութեան ամենահաստատ սիւներէն մէկն է: Այդ գիտակցութեամբ, Հայ Օգնութեան Միութիւնը տարիներէ ի վեր իր կարեւոր առաքելութիւններէն մէկը դարձուցած է հայեցի կրթութեան պահպանումն ու զարգացումը՝ տարբեր ծրագիրներու եւ նախաձեռնութիւններու միջոցով:

Այս ծիրէն ներս յատուկ տեղ կը գրաւէ ՀՕՄ-ի Գանատայի Ծրջանային Վարչութեան Սիրտէ Սիրտ Խմբակցութիւնը, որ երկար տարիներէ ի վեր իր նուիրումով կը սատարէ կրթական կեանքին՝ օժանդակելով վարժարաններուն, ուսանողներուն եւ կրթական զանազան ծրագիրներուն:

Այս առիթով գրուցեցիմք Սիրտէ Սիրտ Խմբակցութեան յանձնախումբի անդամներ՝ Անի Օհանեանի եւ Հուրի Նաճարեանի հետ, ծանօթանալու համար Խմբակցութեան գործունէութեան, նպատակներուն եւ ապագայի տեսլականին:

Հորիզոն- Ե՞րբ եւ ի՞նչ պայմաններու բերումով հիմնուեցաւ ՀՕՄ-ի Գանատայի Ծրջանային Վարչութեան Սիրտէ Սիրտ Խմբակցութիւնը:

Հուրի Նաճարեան- Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Ծրջանային Վարչութեան Սիրտէ Սիրտ Խմբակցութիւնը հաստատուած է 1991-ին, Գանատան առանձին շրջան դառնալէ ետք, եւ 35 տարիներ շարունակաբար սատար հանդիսացած է Գանատայի հայկական վարժարաններուն ու կրթական զանազան ծրագիրներուն, ինչպէս նաեւ կրթաթոշակներու միջոցաւ զօրակցած է մեր հայ վարժարաններուն եւ անոնց մէջ տրուած հայեցի կրթութեան, ինչպէս նաեւ բարձրագոյն ուսման:

Սիրտէ Սիրտ Խմբակցութիւնը կամուրջ մըն է, որ կը միացնէ սրտերը եւ կը կերտէ ապագան: Ամէն նուիրատուութիւն կը դառնայ լոյս՝ կրթութեան ճամբով, եւ այդ լոյսը կը շարունակէ ապրիլ նոր սերունդներուն մէջ:

Հորիզոն- Ի՞նչ են Խմբակցութեան նպատակները:

Անի Օհանեան- ՀՕՄ-ի Գանատայի Ծրջանային Վարչութեան Սիրտէ Սիրտ Խմբակցութեան անդամակցելով սատար կը հանդիսանաք՝

Ա. Գանատայի շրջանի մէջ հայկական կրթական հաստատութիւններու եւ ՀՕՄ-ի ամառային ճամբարներու տարեկան յատկացումներուն:

Բ. ՀՕՄ-ի Գանատայի Ծրջանային Վարչութեան կրթաթոշակներու եւ մրցանակներու յատկացումներուն:

Գ. ՀՕՄ-ի Գանատայի շրջանի յատուկ կրթական ծրագիրներու օժանդակութեան:

Հորիզոն- Ինչպէ՞ս կրնանք անդամակցիլ Սիրտէ Սիրտ Խմբակցութեան:

ԱՕ- Սիրտէ Սիրտ Խմբակցութեան անդամ կարելի է ըլլալ տարեկան դրութեամբ՝ նիւթապէս

սատարելով \$100, \$200, \$300 եւ յաւելեալ գումարներու նուիրատուութեամբ, որուն դիմաց պիտի տրուի տուրքէ զերծ ստացագիր: Կարելի է նաեւ ընտանեկան ուրախ առիթներով կամ այլ պարագաներով, փոխանակ նուէրի, ձեր նուիրատուութիւնները յատկացնել վերոյիշեալ նպատակներուն:

2025 թուականին, ՀՕՄ-ի Գանատայի Ծրջանային Վարչութիւնը վերոյիշեալ նպատակներուն համար յատկացուցած է շուրջ \$80,000:

Յաւելեալ տեղեկութիւններու համար կրնաք կապուիլ ՀՕՄ-ի Ծրջանային Վարչութեան՝ ելեկտրոնային փոստով՝ ars-canada@bellnet.ca, կայքէջով՝ www.ars-canada.ca կամ հեռաձայնելով՝ 1-514-333-1616:

Ձեր նուիրատուութիւնները կրնաք կատարել հետեւեալ ձևերով՝

- Վճարագրով՝ ARS Foundation, 3401 Olivar Asselin, Montreal, QC, H4J 1L5

- E-transfer-ով՝ ars-canada@bellnet.ca

- Առցանց՝ www.ars-canada.ca/donations

Կանխիկ վճարելու պարագային՝ գումարները յանձնել ՀՕՄ-ի Ծրջանային Վարչութեան անդամներուն կամ տեղւոյն մասնաճիւղին:

Բոլոր պարագաներուն արձանագրել՝ Սիրտէ Սիրտ կամ Heart to Heart:

Հորիզոն- Ե՞րբ եւ ինչպէ՞ս կարելի է Խմբակցութեան մաս կազմել եւ նպաստել կրթական ծրագիրներուն:


Հն- ՀՕՄ-ի Գանատայի Ծրջանային Վարչութիւնը Փետրուար ամիսը նկատի ունեցած է, որպէս ծրագրի մեկնարկի ամիս, ուր մեծ թափով զարկ կը տրուի քարոզչութեան եւ նոր անդամներ ներգրաւելուն: Սակայն հարկ է նշել, թէ կարելի է որեւէ ժամանակ նուիրաբերել եւ դառնալ Խմբակցութեան անդամ՝ նպաստելով ՀՕՄ-ի կրթական ծրագիրներուն:

Հորիզոն- Ի՞նչ է Խմբակցութեան քարոզչական եւ այլ աշխատանքներու գործելանո՞րը:

ԱՕ- Յանձնախումբը նշանակուած օրէն գործի լծուեցաւ եւ արդիական քարոզչական աշխատանքին վերաբերեալ բոլոր միջոցները օգտագործեց՝ ծրագիրը հասանելի դարձնելու գանատահայ գաղութի բոլոր խաւերուն: Նամակներ, յայտարարութիւններ եւ այլ գովազդներ պատրաստուեցան՝ ծրագիրը համապարփակ ձևով ծանօթացնելու բոլորին:

Ներկայիս, գաղութներէ ներս՝ Ծրջանային Վարչութեան թելադրութեամբ եւ անոր հովանիին ներքեւ, պիտի կազմուին ենթախմբայինները, որոնց ջանքերով զարկ պիտի տրուի Խմբակցութեան անդամական աճին:

Հորիզոն- Ի՞նչ թիրախ կը նպատակադրէք այս նախաձեռնութեան համար:



Հն- ՀՕՄ-ի Գանատայի Ծրջանային Վարչութիւնը՝ մեր կրթական հաստատութիւններուն, ամառային ճամբարներուն, շաբաթօրեայ վարժարաններուն, մանկապարտէզներուն եւ մանկաստաններուն յատկացումներ կատարելէ անկախ, կրթաթոշակներ կը յատկացնէ 12 համալսարանական եւ 5 գոյէճ յաճախող ուսանողներու, ինչպէս նաեւ կ'օժանդակէ կրթական յատուկ ծրագիրներուն:

Նկատի ունենալով ծրագրի տարողութիւնը եւ նպատակները, ինչպէս նաեւ տարուէ տարի բազմացող կրթական կարիքները, այս տարեշրջանին մեր թիրախն է գոյացնել \$100,000: 2026 տարեշրջանին, ՀՕՄ-ի Գանատայի Ծրջանային Վարչութիւնը, պիտի յատկացնէ՝ \$25,000՝ համալսարան եւ գոյէճ յաճախող ուսանողներուն, \$5,000՝ ամառային ճամբարներուն եւ \$72,400՝ կրթական հաստատութիւններուն:

Հորիզոն- Նուիրատուութիւններու համար որո՞նց պիտի դիմէք:

ԱՕ- Ներկայիս գոյութիւն ունեցող Սիրտէ Սիրտ Խմբակցութեան անդամներուն կողքին, յանձնախումբը պիտի կեդրոնանայ նոր անդամներ ներգրաւելու աշխատանքին, ինչպէս նաեւ պիտի դիմէ ՀՕՄ-ի կրթաթոշակ ստացած ուսանողներուն, որոնք, վստահ ենք, որ պիտի քաջալերեն ու զօրավիգ կանգնին այս նախաձեռնութեան:

Մեծ ակնկալիքներ ունինք հայ գործատէրերէ եւ օտար կազմակերպութիւններէ, որոնց մասնակցութիւնն ու աջակցութիւնը պիտի խնդրենք: Յոյսով ենք, որ այս բոլոր նուիրատուութիւններէն կարելի պիտի ըլլայ գոյացնել ակնկալուած թիրախը:

Կոչ կ'ուղղենք ՀՕՄ-ի անդամներուն, գանատահայ գաղութին, գործատէրերուն՝ ՀՕՄ-ի ընտանիքի ընդմէջէն նպաստելու մեր կրթական բոլոր ծրագիրներու յատկացումներուն:

Լոյս տեսած է ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»-ի 2026 թուականի երրորդ համարը

Լոյս տեսած է ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»-ի 2026 թուականի մարտ ամսուան համարը՝ իր էջերուն մէջ ամփոփելով Հայաստանի ներքին քաղաքական կեանքի վերջին զարգացումները, տարածաշրջանային տագնապներն ու ազգային յիշողութեան առնչուող կարեւոր իրադարձութիւնները:

Թիւի առաջնորդող յօդուածը կը կեդրոնանայ Երեւանի մէջ վերջերս վերաձեւաւորուած «Հայաստան» դաշինքին վրայ, որուն շուրջ համախմբուած են ՀՅ Դաշնակցութիւնը եւ «Առաջ» կուսակցութիւնը՝ վարչապետի թեկնածու առաջադրելով ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանը: Ընտրական այս եռուզեռի նախաշեմին պաշտօնաթերթը հայ ընտրողին կը յորդորէ յստակացնել այն չափանիշները, որոնց պէտք է տիրապետէ երկրի ղեկը ստանձնող անձը՝ դիմագրաւելու համար պետութեան առջեւ ծառայած ճակատագրական մարտահրաւէրները:

Միաժամանակ, թերթի մշտական հեղինակ Անի Մելքոնեան խոր մտահոգութեամբ կը վերլուծէ իշխանութիւններուն կողմէ առաջարկուող սահմանադրական նոր նախագիծը, զայն որակելով իբրեւ պետութեան հայկական դիմագիծի «մահուան վկայական»: Քաղաքական այս անդրադարձներուն կողքին, «Դրօշակ»-ը նաեւ անդրադարձած է տարածաշրջանային աշխարհաքաղաքական բարդ կացութեան: Քաղաքագէտ Վահէ Դաւթեանի, ինչպէս նաեւ իրանագէտներ Լիանա Պետրոսեանի եւ Նարէ Գէորգեանի վերլուծումները լոյս կը սփռեն մեր շրջապատին մէջ բռնկած պատերազմական իրավիճակին եւ անոր՝ Հայաստանի վրայ ունենալիք հաւանական ազդեցութիւններուն վրայ:

Պատմական յիշողութեան ծիրէն ներս, նորատիպ համարը յատուկ տեղ կը յատկացնէ 1920 թուականի Շուշիի ջարդերուն, որոնք ցեղասպանագէտ Մարի Յովհաննիսեանի կողմէ կը ներկայացուին իբրեւ Ատրպէյճանի ոճ-բազորձութիւն՝ իրականացած անգլիական կողմի թոյլտուութեամբ: Նոյն-



պէս, Քրիստափոր Միքայէլեանի մահուան տարելիցին առիթով, Թեհրանի «Ալիք» թերթի խմբագիր Արամ Շահնազարեանը կը վերլուծէ ՀՅԴ հիմնադիրի գաղափարական հայեցքները՝ շեշտելով անոնց այժմէականութիւնը ինքնապաշտպանութեան իրաւունքի պահպանման գործին մէջ:

Համաստեղի գրիչով ներկայացուած է նաեւ Վահան Նաւասարդեանի կերպարը, մինչդեռ Անժելա Յարութիւնեանը կը քննադատէ իշխանութիւններու այն փորձերը, որոնք կը միտին լուծեցնել գիտակրթական վերնախաւը եւ խարխիլ ազգային դաստիարակութեան հիմքերը:

Այս նոր համարով «Դրօշակ»-ը կը շարունակէ հանդիսանալ ազգային-քաղաքական միտքի դարբնոց՝ ընթերցողին ներկայացնելով անցեալի դասերն ու ներկայի հրամայականները:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մամուլը որպէս հայ ազգային-քաղաքական մտքի ձեւաւորման գործօն (19-րդ դարի վերջ – 20-րդ դարասկիզբ)

Հայ քաղաքական մտքի եւ ազգային պայքարի պատմութեան մէջ առանձնապատուկ տեղ ունի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մամուլը:

Դեռ 19-րդ դարի վերջից Դաշնակցութեան մամուլը ձեւաւորեց ազգային-ազատագրական մտածողութիւն, այն դադափարական դաստիարակութեան դպրոց էր, ինքնութեան պաշտպանութեան միջավայր եւ քաղաքական դիմադրութեան գործիք:

ՀՅԴ մամուլը միաւորում էր հայութեանը՝ Թիֆլիսից մինչեւ ժնեւ, Պոլսից մինչեւ Պոստոն:

19-րդ դարի վերջ – 20-րդ դարասկզբին այն բառացիօրէն պայքարի գէնք էր. չկար պետականութիւն, եւ թերթն էր, որ մարմնաւորում էր դադափարական պետութիւնը:

Բանասիրական գիտութիւնները թեկնածու Մարիամ Յովսէփեանը, իր «ՀՅԴ կուսակցական եւ համակիր պարբերական մամուլը Օսմանեան Թուրքիայում 1909-1915 թթ. եւ 1918-1923 թթ.» գիտական աշխատութեան մէջ, հիմնուելով Մ. Վարանդեանի «Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն» եւ Միմոն Վրացեանի «Յուշակատում Հ.Յ. Դաշնակցութեան (1890-1950)» աշխատութիւններին, նշում է, որ 19-րդ դարի վերջին հիմնուել եւ 20-րդ դարի սկզբին բուռն ծաղկում է ապրել Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պարբերական մամուլը, որը յաճախ միեւնոյն պարբերականը տպագրել է տարբեր անուններով՝ թուրքական կամ ուսական կառավարական համապատասխան մարմինները արգելքներէ խուսափելու նպատակով:

Այդ տարիներին Թիֆլիսում լոյս է տեսնում «Յառաջը» (1905 թ.), «Ալիքը» (1906 թ.), «Երկիրը» (1906 թ.), «Ձանգը» (1906 թ.) «Ժամանակը» (1906-1907 թթ.), 1907 թ. «Փայլակը», «Խարխիւր», «Ժայռը», «Արորը», «Կովկասի առաւօտը», «Նոր ալիքը», «Վտակը» (1907-1908 թթ.) «Ձանգակը» (1908 թ.), «Գործը» (1908-1909 թթ.), «Հորիզոնը» (1909-1918 թթ.), «Նոր ուժը» (1914 թ.): Պագրուում հրատարակում են «Գրոհ» (1906-1907 թթ.) եւ «Թուրքիկ» (1906 թ.) թերթերը, Ալեքսանդրապոլում՝ «Ժայռը» (1909-1911 թթ.), Ֆիլիպպոսում (այժմ Պոլսի վրէժ)՝ «Խաղմիկը» (1905-1910 թթ.), Կարինում՝ «Յառաջը» (1909-1914 թթ.), «Ալիքը» (1914 թ.) եւ «Երկիրը» (1914 թ.), Էրզրումում՝ «Արորը» (1910-1911 թթ.), Տրապիզոնում՝ «Պիծակը» (1911-1912 թթ.), Իզմիրում՝ «Գոյամարտը» (1919-1920 թթ.), Թաւրիզում՝ «Այգը» (1912-1922 թթ.): Կ. Պոլսում 1908-1909 թթ. լոյս է տեսել «Ազդակ» շաբաթաթերթը, որը չի եղել ՀՅԴ պաշտօնաթերթ, այլ հրատարակուել է դաշնակցականները ջանքերով:

Թուրքիայի մայրաքաղաք Կ. Պոլսում եւ բուն արեւմտահայ գաւառում ու գաղթավայրերում ՀՅԴ-ն հրատարակել է բազմաթիւ պարբերականներ: Աշխատութեան հեղինակը նշում է, որ Կ. Պոլսի ՀՅԴ պարբերական մամուլի օրկանները 1909-1924 թթ. հրատարակուել են 2 փուլով. 1909-1915 թթ. եւ 1918-1924 թթ.: 1909-1915 թթ. հրատարակուել են «Ազատամարտ» օրաթերթը (1909-1915 թթ.), «Ուսանող» (1909-1914 թթ.) եւ «Երկունք» (1909-1914 թթ.) ամսաթերթերը, հասարակագիտական եւ գրական ուղղուածութեամբ «Ազդակ» շաբաթաթերթը (1908-1909 թթ.), «Շանթ» (1911-1915 թթ.) ու «Մեհհեան» հանդէսները (1914 թթ.), «Նաւասարդ» տարեգիրքը (1914 թ.), «Ամէնուն տարեցոյցը» (1909-1914 թթ.), իսկ 1918-1924 թթ.՝ «Ճակատամարտ» օրաթերթը (1918-1924 թթ.), «Ճակատամարտ» գիւղատնտեսական ամսօրեայ (1919-1920 թթ.) եւ «Ճակատամարտ» մանկավարժական ամսօրեայ (1918-1920 թթ.) յաւելուածները, «Շանթ» գրական-քաղաքական (1918-1919 թթ.) եւ «Հայ սկառտ» մարզական (1919-1922 թթ.) հանդէսները:

Մարիամ Յովսէփեանի գնահատմամբ՝ հրատարակութեան առաջին փուլում Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կոստանդնուպոլսի պարբերականները հիմնական առաքելութիւնը կուսակցութեան ծրագրային գրոյթներն ու դադափարական սկզբունքները հանրութեանը ներկայացնելն է եղել:

Հետեւաբար կարող ենք ասել, որ ՀՅԴ-ն նպատակ է ունեցել ոչ միայն ընթերցողին ծանօթացնել իր քաղաքական դիրքորոշումներին, այլեւ համակարգուած կերպով ներկայացնել կուսակցութեան աշխարհայեացքային ամբողջական պատկերը՝ ընդգրկելով հասարակական, գրական եւ մշակութային հիմնահարցերի վերաբերեալ իր տեսլականը: Ուստի յստակ է, որ այս գործընթացը միտուած էր ընթերցողի մէջ ձեւաւորելու ոչ թէ պարզապէս տեղեկացուածութիւն, այլ գիտակցուած դադափարական դիրքաւորում:

րում: Այդպիսով, մամուլը ՀՅԴ-ի համար հանդէս էր գալիս որպէս դադափարական դաստիարակութեան գործիք:

Երկրորդ փուլում, ըստ հեղինակի, առաջնահերթութիւնները փոխուել են: Գերակայ են դարձել հայապահպանութեան մարտահրաւէրները, Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման ուղղութեամբ ծաւալուած գործընթացը, Հայաստանի առաջին Հանրապետութեան հետ կապերի հաստատումն ու հնարաւորութեան սահմաններում հայրենիքին նիւթական եւ բարոյական աջակցութիւն ցուցաբերելը:

Այսպիսով, երկրորդ փուլում ՀՅԴ մամուլի գործունէութիւնը ձեռք է բերում գործնական եւ ռազմավարական ուղղուածութիւն, վերածուում է ազգային դիմակայութեան, յիշողութեան պահպանման եւ համահայկական համախմբման կարեւորագոյն գործիքի՝ միաժամանակ ծառայելով թէ՛ քաղաքական պայքարին, թէ՛ հայրենիք-սփիւռք կապերի ամրապնդմանը:

1909-1915 թթ., հայ ժողովրդի ճակատագրական տարիներին պարբերականներ են հրատարակուել ոչ միայն Կոստանդնուպոլսում, այլեւ արեւմտահայ գաւառներում ու գաղթավայրերում, որոնք հիմնականում եղել են շաբաթաթերթեր, երկշաբաթաթերթ կամ ամսաթերթ, որոնցում կուսակցութեան գործունէութեան կողքին ներկայացուել է արեւմտահայ գաւառների հասարակական կեանքը՝ իր խնդիրներով, մտահոգութիւններով եւ պահանջներով:

ՀՅԴ այս մամուլի ամբողջական հաւաքածուները պահուում են Վիեննայի Միթիթարեան միաբանութեան գրադարանում:

Հ. Տասնապետեանը իր “History of the Armenian Revolutionary Federation Dashnaksutiun (1890-1924)” աշխատութեան մէջ նշել է, որ 1909 թ. օգոստոս-սեպտեմբերին Վառնայում գումարուած ՀՅԴ 5-րդ համաժողովը, կարեւորելով տարածաշրջանային գործունէութիւնը, որոշում է կայացրել թերթեր հրատարակել թէ՛ երկրում, թէ՛ Կոստանդնուպոլսում: Եւ Կարինի «Յառաջ» եւ Թիֆլիսի «Հորիզոն» հետ 1909 թ. Կ. Պոլսում սկսել է հրատարակուել «Ազատամարտ»՝ Ռ. Զարգարեանի իմբագրութեամբ, որի համար «Հայրենիք»-ը գրում է (1924, թիւ 3, էջ 67-71, թիւ 5, էջ 93-97). «Թերթը իր շնորհիւ կուսակցութեան մը օրկանը չեղաւ միայն, այլ՝ հայ ժողովուրդի առողջ բնագոյններուն ամբողջական արտայայտութիւնը, հայ մտքին ճիգերուն ասպարէզը»: Թերթը, առաջնորդուելով «Ամէն ինչ ժողովրդի համար եւ ժողովրդի միջոցով» նշանաբանով, նպաստել է հայրենի գրականութեան զարգացմանը՝ հայ գիրը հասցնելով անգամ Արեւմտեան Հայաստանի ամենահեռաւոր անկիւններ:

«Ազատամարտի» էջերում է եղել հայ մտաւորականութեան սերուցքը՝ Գր. Զոհրապը, Դ. Վարուժանը, Միամանթօն, Աւ. Իսահակեանը, Ռ. Սեւակը, Ա. Ահարոնեանը, Զ. Եսայեանը, Գ. Տէր-Կարապետեանը, Գ. Խաթակը, Ա. Վառնեանը, Մ. Կիրեճեանը, Մ. Վարանդեանը, Լ. Շանթը եւ ուրիշներ:

1915 թ. ապրիլի 24-ի կէսգիշերին ձերբակալուում ու բանտարկուում է «Ազատամարտի» աշխատակազմը, որոնց հետ եւ Ռ. Զարգարեանը, ով հրաժարուել էր հեռանալ երկրից՝ ասելով. «Ես «Ազատամարտի» գլուխը պէտք է ըլլամ մինչեւ իր վերջին օրը» («Հայրենիք» ամսագիր, Պոսթոն, 1925, թիւ 3, էջ 28-44):

Մ. Վարանդեանի գնահատմամբ՝ «Ազատամարտ»-ը կարեւոր դիրք ու ազդեցութիւն է ունեցել պետական կեանքում. նրա ձայնը լսելի է եղել իշխանութիւններին համար, իսկ անկախ, անկողմնակալ եւ քննադատական խօսքը գրաւել է լայն մտաւորական շրջանակներին:

Փրոֆեսոր Յակոբ Սիրունին «Ազատամարտի» գերը բնորոշում է. «Երիտասարդութեան համար տեսակ մը սրբավայր էր «Ազատամարտ»ի շէնքը: Հոն էր, կերպով մը, հայ կեանքին բազկերակը»:

Հայ մանկավարժ, մատենագէտ, իմբագիր Արտաշէս Տէր-Խաչատուրեանի «Հ.Յ. Դաշնակցութեան 100-ամեայ մամուլը (1890-1990)» ուսումնասիրութեան համաձայն, արեւմտահայ գաւառում 1908-1915 թթ. ՀՅԴ-ն տպագրել է 2 տասնեակից ավելի կուսակցական եւ համակիր պարբերական: Վասպուրականում, օրինակ, դրանցից մի քանիսը հրատարակուել են թուրքալեզու («Սապահիւլ խայր»-ը) կամ հայերէն ու թուրքերէն էջերով: Ընդ որում, գրանք մինչեւ 1908 թ. երիտթուրքական յեղաշրջումը տպագրուել են ընդյատակեայ եւ հիմնա-

կանում եղել են խմբատիպ: 1896-1897 թթ. ՀՅԴ-ն Վասպուրականում տպագրել է «Թուրքիկ» թերթը, իսկ ՀՅԴ Վասպուրականի մամուլի հիմքը դրել է Իշխան Միքայէլեանը՝ (Վանի Իշխան, Նիկոլ Պողոսեան, Միքայէլեան) 1905 թ. այստեղ լոյս ընծայելով «Արեան ձայն» թերթը: Իսկ արդէն նրա հիմնադիր-իմբագրմամբ 1910-1915 թթ. Վանում լոյս է տեսել «Աշխատանք» գրական, քաղաքական եւ տնտեսական շաբաթաթերթը, որը նաեւ ՀՅԴ Վասպուրականի Կեդրոնական կոմիտէի օրկանն էր:

Առանձին-առանձին իւրաքանչիւր թերթ, իր առանձնապատկութիւններով հանդերձ, կիսում էր մի շարք ընդհանուր գծեր. բոլորը միտուած էին նոյն դադափարական ուղղութեանը՝ ազգային ինքնագիտակցութեան ձեւաւորմանը, կրթական ու մշակութային զարգացման խթանմանը եւ հասարակութեան քաղաքական գիտակցութեան բարձրացմանը:

Միմոն Վրացեանը վկայում է, որ Հայաստանի խորհրդայնացումով եւ Պոլսոյ քեմալացումով Հ.Յ. Դաշնակցութեան մամուլը զարգացաւ արտասահմանի մէջ: Հ.Յ. Դաշնակցութեան մամուլի գլխաւոր կեդրոնները դարձան Փարիզը, Գահիրէն, Պոսթոնը, Սիրիան ու Լիբանանը:

19-րդ դարի վերջին, երբ հայ ժողովուրդը զրկուած էր սեփական պետականութիւնից եւ գտնուում էր Օսմանեան ու Ռուսական կայսրութիւններին վարչական վերահսկողութեան ներքոյ, այսպիսի ընդգրկուել մամուլը վկայում է, որ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համար այն ունեցել է ռազմավարական նշանակութիւն, հանդէս է եկել որպէս ինքնակազմակերպման, դադափարական համախմբման եւ քաղաքական ուղղութեան ձեւաւորման միջոց:

ՀՅԴ մամուլը ապահովել է ազգային դադափարախօսական համակարգի ձեւաւորում ու տարածում: Կուսակցութեան ծրագրի, սոցիալ-քաղաքական հայեացքները եւ ազգային-ազատագրական դադափարախօսութեան համակարգուած ներկայացումը նպաստել է միասնական քաղաքական ինքնագիտակցութեան կայացմանը՝ թէ՛ Օսմանեան կայսրութեան, թէ՛ Կովկասեան տարածաշրջանի, եւ թէ՛ սփիւռքեան համայնքների շրջանակներում: Այս իմաստով ՀՅԴ մամուլը, փաստօրէն, ձեւաւորում էր համահայկական հաղորդակցական դաշտ՝ միաւորելով տարբեր երկրներում եւ գաղթավայրերում բնակուող հայութեանը:

1915 թ. նախորդող եւ յաջորդող ժամանակաշրջանում այն ստանձնել է պահանջատիրութեան ձեւակերպման դեր, ազգային ինքնութեան պահպանման եւ մշակութային դիմադրութեան գործառոյթ: Այն վերածուել է գոյապայքարի գործիքի՝ բարձրաձայնելով Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը, հետապնդելով միջազգային ճանաչման հարցը եւ ամբապնդելով կապերը Հայաստանի Առաջին Հանրապետութեան հետ:

Վերջապէս, յետխորհրդայնացման եւ քեմալականացման պայմաններում ՀՅԴ մամուլի կեդրոններին տեղափոխումը սփիւռք, փաստում է նրա կառուցուածքային շարունակականութիւնը՝ դառնալով սփիւռքի ինքնակազմակերպման մեխանիզմ:

Ուստի կարելի է ասել, որ ՀՅԴ-ի համար մամուլը ռազմավարական ռեսուրս էր եւ քաղաքական-դադափարական կառոյց՝ իրականացնելով քաղաքական, դադափարական, կազմակերպչական, հաղորդակցական եւ ազգային մշակոյթի պահպանման գործառոյթներ: ՀՅԴ մամուլի դերը, ինչպէս նշում են մի շարք ուսումնասիրողներ, ըստ էութեան, գերազանցել է դասական կուսակցական լրատուամիջոցի սահմանները եւ վերածուել համահայկական քաղաքական տարածքի ձեւաւորման առանցքային գործօնի:

Ուստի 19-րդ դարի վերջի քաղաքական եւ սոցիալ-մշակութային իրողութիւններին համատեքստում, ՀՅԴ մամուլը պէտք է դիտարկել ոչ միայն որպէս կուսակցական օրկան, այլ ազգային քաղաքական կեանքի կառուցուածքային բաղադրիչ:

Այս տեսանկիւնից կարելի է պնդել, որ առանց ՀՅԴ մամուլի դժուար է ամբողջականօրէն ըմբռնել 20-րդ դարասկզբի հայ քաղաքական մտքի զարգացումը, քանի որ հէնց այդ մամուլն էր այն միջավայրը, որտեղ ձեւակերպուում, բախուում եւ համակարգուում էին ազգային-ազատագրական դադափարներն ու ռազմավարական մտեցումները:

ԱՐՄԻՆԷ ՄՈՒԳՈՅԵԱՆ

U.S.-Israeli attacks on Iran claim first Armenian fatality

ANTELIAS—The ongoing attacks by the United States and Israel on Iran have claimed their first Armenian fatality on March 26, the Catholicosate of the Great House of Cilicia reported, citing sources at the Tehran Prelacy.

After heavy bombing in Isfahan, Hovhannes Simonian, a resident of the Armenian-populated New Djulfa neighborhood in that city was killed, the editor of the Tehran-based Alik Daily told Pastinfo.am in Armenia.

The US-Israeli airstrike on a residential neighbourhood in the central Iranian city of Isfahan has claimed the lives of 26 people, Iranian officials confirmed. According to the semi-official Fars News Agency, citing the Isfahan Governor's Office, the victims of the attack included seven women and seven children—more than half of the total fatalities.

“His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia continues to monitor the situation and, on a daily basis, is in contact with Prelacy leaders in the war-impacted countries,” a statement from the Catholicosate said.

Representatives of the prelaties of Tehran and Isfahan told the Catholicos that their cities were under heavy bombardment the past few days.

On a related matter, Catholicos Aram I invited the three national Armenian political parties—the Social Democratic Hunchagian Party, the Armenian Revolutionary Federation, and the Armenian Democratic Liberal Ramgavar Party—to a consultation to address the rapidly evolving situation in Lebanon, as Israeli forces continue their air and ground attack on the country.

The Catholicos convened the session with a comprehensive analysis of the origins, developments, and strategic objectives of the war in the Middle East, followed by a briefing on the conditions facing Armenian communities across the affected countries where there are prelaties. Participants engaged in substantive discussions on

the military and political dynamics shaping the region, with particular focus on Lebanon.

The meeting highlighted the human and economic aspects of the regional conflict, as well as the profound humanitarian crisis it has triggered. Key concerns raised included the unprecedented surge in internal Lebanese displacement, the resulting demographic shifts, mounting domestic hardships, a deepening economic crisis, and the far-reaching consequences these developments pose for Lebanese society and its Armenian community.

Following thorough deliberations, Catholicos Aram I issued the following directives:

